

Ի ՎԵՐՈՒՄ ԱՆԻԾՈՒԱԾԸ՝ ՊԱՏՆԵՇԻ ՎՐԱՅ

Posted on April 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Սովսէս Ծիրանի, Երեւան, Մարտ 2023**Վեհանոյշ Թեքեան**Երեւան, 1975, Մայիս

Այդ օրերուն Օփերայի մօտ, Շարա Տալեանի բնակարանը կ'ապրէի... վարձով:
Այրիացած Տիկ. Ժամենան ներսէն կանչեց.

--Արի Սովսէս ջան, Էլի էդ «նակլի» մարդն է գանգում:

Այդ «նակլի» մարդը Հրանդ Մաթեոսեանն էր:

--Ասա Հրանդ ջան լսում եմ:

--Վեր կաց արի, քեզ համար լաւ անակնկալ կայ:

--Հենց հիմի՞, ժամը ուրքը անց է արդէն:

--Այո, հենց հիմի:

--Լաւ Հրանդ ջան, բայց կարող է մի քիչ ուշանամ, ընկեր-ընկերուհիներ կան մօտս,
ճանապարհեմ... կը գամ:

--Մի ուշացի, որովհետեւ այստեղ Պէյրուֆից մի տաղանդաւոր գեղեցկուհի է քեզ
սպասում:

--Ո՞վ է, ես ճանաչում եմ...

-- Յայտնութիւն է..., արի կ'իմանաս...

Նման պարագաներու Հրանդը կատակելու սովորութիւն չունէր: Ընդհակառակը՝ թէ՛
ժլատ էր եւ թէ՛ զուսպ իր արտայատութիւններուն մէջ: Չգացի որ այդ պահուն Հրանդը
խանդավառուած է «գեղեցկուհի»ով եւ անմիջապէս գացի: Վեհանոյշ Թեքեանն էր,
անձամբ չէի ճանչնար, սակայն իր քանի մը բանաստեղծութիւնները կարդացած էի ու
տպաւորուած: Պարզուեցաւ որ ծանօթ էր Եղբօս՝ Պետիկին (Պետրոս Հերեանիս) եւ
անոր գրականութեան: Հազիւ սկսանք զրոյցի, ժամանեց նաեւ գրականագիտութեան
Դոկտ. Սուրէն Աղաբաբեանը տիկնոջ հետ: Հակառակ անոր որ Հրանդը բարձր
գնահատականով ու լաւ կերպով ներկայացուց Վեհանոյշին, Աղաբաբեանի
ներկայութիւնն ու անոր չոր կեցուածքը, որոշ պաշտօնականութիւն մը կը հաղորդէին
մեր զրոյցին, որուն թեման բնականաբար գրականութիւնն էր, իսկ առանցքը՝
Վեհանոյշը: Ամենայնդէպս, Հրանդի բարձր տրամադրութիւնն ու տիկնոջ՝ Վերժինէի
սրտբաց վերաբերմունքը, որոշ չափով ջերմացուցին մթնոլորտը եւ վերջաւորութեան ես
համարձակութիւն ունեցայ Վեհանոյշին ըսելու.



Տէրեւ տիկ. Սուրեն Աղաբաբեան, Վեհանուշ Թեքեան եւ Տէր եւ տիկ. Հրանդ Մաթեւոսեան

- Եթէ որեւէ բանի պէտք ունենաս, ինդրեմ հեռաձայնէ եւ ես պատրաստ եմ օգնելու.
- Բարեբախտաբար օգնողներ շատ ունիմ, սակայն անհրաժեշտութեան պարագային կը հեռաձայնեմ...
- Շաբաթ մը ետք Ռազմիկ Դաւոյեանը կանխելով Վեհանոյշին, զանգեց.
- Մովսէս ջան՝ վաղը երկոյեան գործ ունե՞ս:
- Ունեմ, թատրոն եմ գնալու:
- Մի՛ գնա, էստեղ առի աւելի լաւ թատրոն է լինելու:
- Ի՞նչ կայ, ասա Ռազմիկ ջան, արժի՞ որ գամ, ուրիշ ովքե՞ր են լինելու:
- Մերոնք են, օտար մարդ չկայ, Վեհանոյշն է գալու, դուք արդէն ծանօթացել էք Հրանդի մօտ:
- Ես կատակով ըսի.
- Որ այդպէս է, անպայման կը գամ, բայց ոչ թէ քո, այլ Վեհանոյշի «խաթեր»:
- Ռազմիկը իրեն յատուկ «լկտի» առողջանութեամբ ըսաւ.
- Առի, յետոյ կիմանաս ո՞վ, ու՞մ «խաթեր» համար է գալիս...:
- Յաջորդ օրը գացի, հոն էին նաեւ Մ. Գուլաքճեանը եւ Յակոբ Յակոբեանը տիկնոջը՝

Մարիին եւ դստեր՝ Նորայի հետ: Շնորհիւ Ռազմիկ յախուռն ու սրամիտ բնաւորութեան եւ տիկնոջը՝ Յասմիկի ասպնջական ընդունելութեան, երեկոն մտերմիկ ու զուարթ մթնոլորտի մէջ անցաւ:

Պէլրուք, 1978, Ամառ

Շատ լաւ կը յիշեմ, Վեհանոյշենց բնակարանը «Չալքա» թաղամասի «Լը Լա Լէ» վաճառատան վրան էր: Յատուկ առիթով մը Վեհանոյշը հրաւիրած էր նաեւ զիս: Հակառակ անոր որ Պօղոս Սնապեանը խորհուրդ չտուաւ որ երթամ... բայց ես գացի եւ ճիշդ ըրի: Ընդունելութիւնը փառաւոր էր: Այդ օրերուն դիւրին չէր այդքան մարդ հաւաքել եւ այն ալ բոլոր քաղաքական հոսանքներէն, յարանուանութիւններէն յայտնի դէմքեր: Շատ չանցած հաւաքոյթը կիսապաշտօնական բնոյթ ստացաւ...: Երբ ներկաներուն տրամադրութիւնները բարձրացան ու խանդավառ մթնոլորտ մը ստեղծուեցաւ եղան բաժակաճամեր, արտասանութիւններ եւ երգեր: Վեհանոյշը, զսպուած յուզումով յանդուզն «ճառ» մը արտասանեց, աւելի ճիշդը ինքնաբուխ ու «ցաւատանջ» պոռթկում մը ունեցաւ, շեշտը դնելով Սփիւռքի ճգնաժամային խիստ կացութեան ու մեր ազգային անմիաբանութեան մտահոգիչ հարցի վրայ: Իրաւութեամբ համակուած անոր խօսքը, ուղղակիօրէն մեր սերունդի սրտէն կը բխէր, եւ միաժամանակ կ'արտայատէր բռնի ուժով սփիւռքացած հայու տագնապներն ու տուայտանքները: Ես չափազանց ազդուած էի եւ այնքան յուզուած՝ որ ուրիշներու նման չկրցայ անմիջապէս մօտենալ ու շնորհաւորել զինք: Սակայն մեկնելէ առաջ ոչ միայն շնորհաւորեցի, այլ նաեւ շնորհակալութիւն յայտնեցի իրեն, ոչ այնքան ջերմ ընդունելութեան, որքան քաջաբար արտայայտած իր մտքերուն համար:



Մովսէս Հերկելեան եւ Վեհանոյշ Թեքեան

Յաջոր օրերուն, երբ դարձեալ Սևապեանին հանդիպեցայ, ըսաւ.

-- Է՛, ինչպէ՞ս էր, ձեր «կերուխում»ը, լաւ անցա՞ւ:

-- Հաւաքոյթը «կերուխում»է աւելի, ազգային գրական երեկոյի բնոյթ ստացաւ, որ հոյակապ էր:

-- Շատ մարդ կա՞ր:

-- Այո, հակառակ անոր որ համեմատած այլ բնակարաններու, հիւրասրահը բաւականին ընդարձակ էր... լեցուն: Սխալած չեմ ըլլար, եթէ ըսեմ, որ մեր սերունդի մտաւորականներէն քիչեր միայն կը բացակայէին, իսկ երեցներէն էր. Փամպուքեանն ու Գր. Շահինեանը միայն ներկայ էին.:

-- Իսկ Վեհանոյշը...

-- Բացառիկ ելոյթ մը ունեցաւ, թէ՛ տաղադաւոր է եւ թէ՛ ազգային ցաւերով տագնապող բանաստեղծուհի մը: Այս առումով Վեհանոյշը մեր սերունդի իրաւութեան մարմնացումը կը թուի ըլլալ: Ես հիացած եմ...

-- Շատ մի՛ հաւատար, այդ տեսակները կա՛մ մինչեւ ամուսնութիւն կը գրեն, եւ կամ ալ եթէ չամուսնանան, թէեւ կը շարունակեն, սակայն կը խուսանաւեն ծանծաղ ջուրերու մէջ:

-- Կը կարծեմ թէ Նազ Տէր Սարգսեանն ու մանաւանդ Վեհանոյշ Թեքեանը փայլուն ապագայ կը խոստանան: Հարկաւոր է գուրգուրալ ու քաջալերել զիրենք:

-- Նայիր Մովսէս, դուն օտար չես, «Բագին»ի խմբակի պարագային իմ ըրածս ի՞նչ է: Ամէն ինչ կ'ընեմ, որ տեղ հասնին, բայց ի գուր...: Կին գրողներու վրայ շատ յոյս մի՛ դնեմ...:

-- Ես այս գաղութին մէջ նորեկ եմ, բոլորը չեմ ճանչնար, եւ ոչ ալ քու փոճառութիւնդ ունիմ, չեմ կրնար հակաճառել, սակայն ինձի համար Վեհանոյշն ու Նազը արդէն իսկ կայացած գրողներ են: Եւ նկատի առ, որ Հրանդ Մաթեոսեանի եւ Ռազմիկ Դաւոյանի նման դեմքեր եւս, Վեհանոյշի գրականութեան մասին, շատ բարձր կարծիք ունին:

-- Այնուամենայնիւ ապագան ցոյց կու տայ որ չեմ սխալած...

Սևապեանը բոլովին չէր սխալած, Լիբանանահայ կին գրողներէն շատեր մնացին միջակ հարթակներու վրայ, (Նոյնիսկ անոնք, որոնք ինք «յատուկ» կերպով կը շարունակէր քաջալերել), իսկ տաղանդաւորներէն ոմանք պարագաներու բերումով դադրեցան գրելէ: Սակայն եղան նաեւ Մարուշի, Շուշիկ Տասնապետեանի եւ կամ Սեդա Գրիգորեանի նման կիներ, որոնք թէ՛ տաղանդ ունին եւ թէ՛ կը շարունակեն գրել, հակառակ տիրող խիստ աննպաստ պայմաններուն: Իսկ Վեհանոյշի պարագային պարզ է որ կը սխալէր... անոր բարձրորակ եւ պատկառելի վաստակը վկայ, որ ան «Արեւուն գնդակահարելու»

յանդգնութեամբ օժտուած ու ի վերուստ «անիծուած» գրելու մոլուցքով, կը շարունակէ տակաւին պատնէշի վրայ մնալ ու «Ապրիլ անմահութեան թոյնով»...

Պէյրուք, «Ազդակ», (?)

Վեհանոյշ ջան՝

Քիչ կը պատահի որ կարելոր հանդիպումներու վայրը կամ թուականը մոռնամ...: Գուցէ դուն յիշես թէ երբ էր եւ ուր պատահաբար հանդիպեցանք, «Ազդակ»ի խմբագրատան մուտքի՞ն, թէ՞ ուրիշ վայր մը...: Ես ներս պիտի մտնէի, դուն դուրս կ'ելլէիր ընկերուհիի մը ընկերակցութեամբ: Թէեւ ես տրամադրուեցայ ողջագուրուելու, սակայն կածես թէ մէկը զսպեց զիս ու միայն ձեռնուեցանք... իրարու նայեցանք... դուն ըսիր.

-- Վեհանոյշն եմ Վեհանոյշ Թեքեանը...

Զպատասխանեցի... աւելի ճիշդը չկրցա՛յ պատասխանել: Դուն անգամ մը եւս շեշտեցիր.

-- Վեհանոյշն եմ, չե՞ս ճանչնար...

Մինչեւ որ ինքզինքս հաւաքեմ ու պատասխանեմ, դուն՝ քեզ ընկերացող տիկնոջը դառնալով ըսիր.

-- Քալէ քալէ, չճանչցաւ...

Հազիւ ինքզինքս գտած, պիտի պատասխանէի... արդէն հեռացաք...:

Սիրելի Վեհանոյշ՝

Զկրցայ պատասխանել, որովհետեւ կայծակի նման ուղեղիս մէջ արձագանգեց այն օրուայ խիզախ ելոյթը...: Այո, այդ պահուն յուզուեցայ, ոչ թէ անոր համար որ կը հանդիպէի մտերիմի մը, կամ նախկին ընկերուհիի մը, այլ անոր համար, որ այդ օրերուն ինչքան համահունչ էին քու ցաւատանջ մտահոգութիւններդ...:

(Ի դէպ, իմ յանպատրաստից «յուզումս» տարօրինակ ու անբնական չթուի քեզի: Ծատեր կը կարծեն թէ ըրածս դերասանութիւն է, բայց այդպէս չէ: Նոյնիսկ դասախօսութիւններու եւ կամ հարցազրոյցներու ընթացքին յաճախ կը յուզուիմ...: Այս մէկը ընտանեկան «թուլութիւն» մըն է, որուն վարժուած են բոլոր ընկերներս, ծանօթներս ու նոյնիսկ ուսանողներս...: Հայրս՝ Որսորդ Սըղդանը, երբ «Կրունկ»ի եւ կամ «Ծիրանի ծառ»ի նման որեւէ եղանակ լսեր, ոչ միայն կը յուզուէր, այլեւ երբեմն նոյնիսկ կը հեծկտար: Երբ մայրս կը բարկանար իր վրայ, «Իմ ձեռքս չէ» կ'ըսէր: Իմ պարագային ալ...աղուոր աղջիկ, վստահ եղիր որ այդ օրը «Իմ ձեռքս չէր»...

Երեւան, Անտառային թաղամաս, 2018, Յունիս

Էլոյին հետ հրաւիրուած էինք Տոք. Փրոֆ. Յարութիւն Արմէնեանի բնակարանը, ուր

Ներկայ էին նաեւ նախկին ծանօթներու ճարտարապետ՝ Վազգէն Բրուտեանն ու Պէյրուբի հին ընկերներես՝ Յարութիւն Մատենեանը: Զիչ անց ներս մտաւ նաեւ միջահասակ, սակայն թիկնեղ անձնաւորութիւն մը: Տոք. Արմէնեանը ծանօթացուց.

--Տոք. Փրոֆ. Արա Թեքեանը, թէեւ ինք եւս նշանաւոր է իբրեւ մանկավարժ բժիշկ, սակայն յաճախ կը ճանչցուի իբրեւ Վեհանոյշ Թեքեանի եղբայրը:

Ես անմիջապէս պատմեցի Վեհանոյշի հետ հանդիպման «ճախորդ» պատմութիւնը եւ ակնցուցի.

--Աստուած գիտէ թէ Վեհանոյշը այդ պահուն ի՞նչ մտածեց իմ մասին...

--Հոգ մի՛ ըներ, ես ալ հինգ քոյրերուս մէջ միակ տղամարդն եմ, եւ յաճախ կը շփոթեմ գիրենք... ու չեն հասկնար զիս: Սակայն վստահ եղիր որ Վեհանոյշը եթէ լսէ բացատրութիւնդ, ճիշդ պիտի հասկնայ քեզ: Ես կը խօսիմ իրեն...



Ձախէն աջ՝ Ժողովրդական Երգչուհի Վարդուհի (Ռոզա) Խաչատրեան, Մովսէս Հերկելեան, Վեհանուշ Թեքեան եւ Ժողովրդական Երգչուհի Օֆելիա Համբարձումեան

Այդ օր մենք շատ հաճելի եւ շահեկան գրոյց ունեցանք: Բժշկութենէն անցանք

գրականութեան: Ես յիշեցի նաեւ Վեհանոյշի «Ցաւատանջ» ելոյթը, որ դժբախտաբար կը շարունակէր «թարմ» մալ այդ օրերուն, իսկ...: Յետոյ անցանք գեղանակարչութեան, եւ ամենակարեւորը, առիթ ունեցանք դիտելու նաեւ Տոք. Արմենեանի ջրանկարչական աշխատանքներէն շարք մը, որոնք տաղանդաւոր ու կայացած արուեստագետի մը արգասիքը կ'ենթադրեն:

Վերջաւորութեան՝ Արան հեղինակին կողմէ նուիրեց մեզի (Էլոյին եւ ինծի) Վեհանոյշին նոր հրատարակուած երկու պատկառելի եւ գեղատիպ հատորները, «Սփիւռքապատում» եւ «Սփիւռքագիր», զորս տարի եւ փոխանակ գրադարանիս մէջ գետեղելու եւ մոռնալու, ինչպէս յաճախ կ'ընեմ, դրի գրասեղանիս: Հակառակ անոր որ երկար տարիներէ ի վեր արուեստով կը զբաղիմ, եւ գրեթէ գրականութիւն չեմ ընթերցեր, օրեր ետք չկրցայ դիմանալ գայթակղութեան ու սկսայ թերթատել զանոնք ու ...բռնուեցայ: Բանաստեղծութիւններէն ոմանք կարծես թէ այսօր գրուած ըլլային:

Վեհանոյշ ջան՝

Եթէ ըսեմ որ երկու հատորներն ալ լրիւ կարդացի, մի՛ հաւատար, սակայն եթէ ըսեմ որ շարք մը պատմուածքներ ու բազմաթիւ բանաստեղծութիւններ ընթերցեցի... հաւատա՛: Այնուամենայնիւ, սակայն ես չէ որ պիտի գնահատեմ գրական վաստակդ, այլ սկսեալ Շահան Շահնուրէն մինչեւ Գուրգէն Մահարի Ալեքսանդր Թոփչեանի ու Հէնրիկ Էդոյեանի նման դժուարահաճ դեմքեր արժեւորած են ու բարձր գնահատանքներ արձանագրած են քու հասցէին...:

Անոնք չեն սխալած...:

There are no comments yet.